ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի մասին օրենքում լրացումների վերաբերյալ

Հոդված 4. Հիմնական Հասկացությունները

30) օգտակար տարածք՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի կողից տեղակայանքներ տեղադրելու համար նախատեսված՝ տեխնիկատնտեսական և օրենսդրական պահանջներին համապատասխանող տարածք, որտեղ արտադրողականության բնութագրերը չեն նվազում կողմնակի ազդեցությունների արդյունքում:

Հոդված 48. Սպառողի կողմից էկեկտրական էներգիայի փոխանցումը

1. Սպառողը պարտավոր է իր էներգատեղակայանքներով փոխանցել էլեկտրական էներգիան կամ բնական գազը, որը նախատեսված է ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար՝ հանձնաժողովի սահմանած կարգով:

ա. Սպառողը պարտավոր է իր էներգիատեղակայանքներով մատակարարին փոխանցել նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրող հանդիսացող ենթասպառողի առաքած էլեկտրաէներգիան:

բ Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրող հանդիսացող ենթասպառողի կողմից բաշխողին էլեկտրական էներգիայի մատակարարումը և դրա դիմաց հատուցումը կատարվում է վերականգնվող էներգետիկ փոխհոսքեր իրականացնող ինքնավար արտադրողի և բաշխողի միջև Հանձնաժողովի որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան և ենթասպառողը պարտավոր է մատակարարին վճարել փողհոսքերի ապահովման համար վճարներն ու առաջացած ծախսերը իրենց միջև կնքված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման պայմանագրի հիման վրա:

Հոդված 59. Անցումային դրույթներ

6.Արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը չի կարող գերազանցել **500** կիլովատը այն իրավաբանական անձանց դեպքում, որոնք ոչ ավել քանի **1** տարի գործել են ընդհանուր հարկման համակարգում, իսկ **1** տարեկանից բարձր իրավաբանական անձանց դեպքում՝ նախորդ տարվա ընթացքում իրենց սպառած էներգիայի հզորությանը գումարած **50** տոկոս ավել դրվածքային հզորություն, բայց ոչ ավել, քան **2** մեգավատ, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման՝ կառուցման և արտադրության ժամանակահատվածներում: